ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2015թ. **N---- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ կից հավելվածում նշված քաղաքացիներին, 4-րդ կարգի վթարային շենքերից վերաբնակեցնելու նպատակով, անհատույց օտարել (նվիրել) բնակարաններ՝ Շինարարների փողոցի հ.6/1 հասցեում գտնվող նոր կառուցված շենքից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող նախագծով նախատեսվում է Շինարարների փողոցի հ.6/1 հասցեում գտնվող նոր բնակելի շենքում վերաբնակեցնել Երևան քաղաքում առկա 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 և Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/2 հանրակացարանային շենքերի բնակիչներին՝ համաձայն հավելվածի։

ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքում քանդման ենթակա վթարային հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգը հաստատելու մասին» 172-Ն որոշմամբ կարգավորվում են քանդման ենթակա վթարային հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման հետ կապված իրավահարաբերությունները։

Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կից հավելվածում նշված քաղաքացիները՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությանը, դեռևս բնակվում են վթարային շենքերում։ Այդ շենքերը գտնվում են փլուզման սպառնալիքի տակ և անկանխատեսելի հետևանքներից խուսափելու նպատակով, քաղաքացիների հետ կատարված բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հավելվածում նշված ընտանիքներին վերաբնակեցնել և տրամադրել նոր բնակարաններ նորակառույց շենքերից՝ լուծելով նրանց բնակարանային խնդիրները։

Տրամադրվող բնակարանների ցանկը՝ համաձայն հավելվածի, ինչպես նաև յուրաքանչյուր ընտանիքի անհատական տվյալների նկարագիրը մանրամասն կցված է որոշման նախագծին։

Քաղաքացիներ Լարիսա Դանիելյանը, Արմեն Ազատյանը, Մարինե Ազատյանը, Դավիթ Ազատյանը, Աշոտ Ազատյանը, Արսեն Ազատյանը, Սուսաննա Ազատյանը և Միքայել Ազատյանը /ընդհանուր 8 անձ/ 2000 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 հանրակացարանային շենքի հ.17 բնակարանում /հիմք՝ 23.09.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.497114 տեղեկանք, 25.09.2015թ «Ծաղկունք» համատիրության հ.240 տեղեկանք /։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենք, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ Աստղիկ Բաղդասարյանը, Աստղիկ Սահակյանը և Ամալյա Օլեյանը /ընդհանուր 3 անձ/ 2002 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 հանրակացարանային շենքի հ.22 բնակարանում /հիմք՝ 09.06.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.480171, 480172 և 480175 տեղեկանքներ, 11.06.2015թ «Ծաղկունք» համատիրության հ.178 տեղեկանք/։

Նշված քաղաքացիները համաձայնություն են տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենք, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ Անահիտ Հակոբյանը, Սոնա Հակոբյանը և Մերի Հակոբյանը /ընդհանուր 3 անձ/ 2003 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Սիսակյան փողոցի հ.3 հանրակացարանային շենքի հ.34 բնակարանում /հիմք՝ 17.06.2015թ և 18.06.2015թ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ.482659 և հ.482667 տեղեկանքներ, 17.06.2015թ «Ծաղկունք» համատիրության հ.1548 տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենք, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները։

Քաղաքացիներ Սուսաննա Ասատրյանը, Ջեմմա Ներսեսյանը, Հրաչյա Ավետիսյանը, Կարեն Ավետիսյանը, Արմենուհի Մնացականյանը, Լիանա Գևորգյանը, Հայկ Ավետիսյանը, Ալեն Ավետիսյանը, Լիկա Ավետիսյանը և Նարեկ Ավետիսյանը /ընդհանուր 10 անձ/ 2003 թվականից հաշվառված և փաստացի բնակվում են 4-րդ կարգի վթարային Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/2 շենքի հ.227, 228 բնակարանում /հիմք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Շենգավիթի անձնագրային բաժանմունի 02.10.2015թ հ.28/10-15999 գրություն, 14.10.2015թ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի հ.00874676 տեղեկանք/։

Նշված ընտանիքը համաձայնություն է տվել վերաբնակեցվել նորակառույց Շինարարների փողոցի հ.6/1 շենք, սակայն տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները։

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի։

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված դեպքերում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել այս ընտանիքների վերաբնակեցման հարցը լուծելու համար ընդունել Երևանի ավագանու համապատասխան որոշում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
,,_____,,_____ 2015թ. N_____-Ա որոշում

Ց Ա Ն Կ

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Վթարային շենքի բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Տրամադրվող բնակարանի հասցեն	Կառուցվածքը /սենյակների թիվը/	Ծանոթություն
1	Լարիսա Դանիելյան Արմեն Ազատյան Մարինե Ազատյան Դավիթ Ազատյան Աշոտ Ազատյան Արսեն Ազատյան Սուսաննա Ազատյան Միքայել Ազատյան	Սիսակյան փողոց հ.3 շենք, բն հ.17	1	Շինարարների փողոցի հ.6/1 բն.40	1	
2	Աստղիկ Բաղդասարյան Աստղիկ Սահակյան Ամալյա Օլեյան	Սիսակյան փողոց հ.3 շենք, բն հ.22	1	Շինարարների փողոցի հ.6/1 բն.37	1	
3	Անահիտ Հակոբյան Մերի Հակոբյան Սոնա Հակոբյան	Սիսակյան փողոց հ.3 շենք, բն հ.34	1	Շինարարների փողոցի հ.6/1 բն.48	1	
4	Սուսաննա Ասատրյան Ջեմմա Ներսեսյան Հրաչյա Ավետիսյան Կարեն Ավետիսյան Արմենուհի Մնացականյան Լիանա Գևորգյան Հայկ Ավետիսյան Ալեն Ավետիսյան Լիկա Ավետիսյան Նարեկ Ավետիսյան	Արցախի 4-րդ նրբանցքի հ.10/2 շենքի հ.227, 228	2	Շինարարների փողոցի հ.6/1 բն.45	2	